ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-18/1-1-ՔԻՄ/9

N 11/163-2018

Ք. Երևան «27» «04» 2018թ.

ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա.Գ. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «ԼեյկոԱլեքս» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Գ. Ալեքսանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

«ՀՀ ԱԱԾ ՌԲՎ» Մտից № 78 «27» 04 2018 թ.

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը,

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը,

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Ստանալ ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և տեսանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **861 933,75 (ութ հարյուր վաթսունմեկ հազար ինը հարյուր երեսուներեք դրամ, յոթանասունհինգ լումա)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[3]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱԱԾ	**«ԼեյկոԱլեքս» ՍՊԸ**
ք.Երևան, Նալբանդյան104	**ք. Երևան, Ֆուչիկի 27/14**
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն	**«Ինեկոբանկ» ՓԲԸ**
Հ/հ 900011301075	**Հ/հ 205002223860**
ՀՎՀՀ 01507079	**ՀՎՀՀ 04414816**
Տնօրենի տեղակալ	**Տնօրեն**
Ա. Հակոբյան	**Գ. Ալեքսանյան**

Հավելված N 1
11/163-2018 27.04 2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը՝ ըստ աղյուսակ N1-ի	մատակարարման		
									հասցեն	ընդհանուր քանակը՝ ըստ աղյուսակ N1-ի	Ժամկետը **
1	33141115/1	Բժշկական բամբակ	Հայաստան, Ռեկոֆարմա	Բամբակ բժշկական, հիգրոսկոպիկ, հիգիենիկ փաթեթավորված 100գ կամ 50գ զանգվածով:Ֆիրմայի նշանով	կիլոգրամ	1699,00	67960	40	Ք. Երևան, Ամիրյան 23	40	2018թ-ի դեկտեմբերի 15-ը՝
2	33141118/1	Անձեռոցիկներ	Հայաստան, Ռեկոֆարմա	16 սմ x14 սմ երկչերտ, թանզիֆից, մանրէազերծ, անհատական փաթեթավորված N10 կամ N20 տուփերով: Հանձնման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթություն):Ֆիրմայի նշանով	հատ	7,99	31960	4000	Ք. Երևան, Ամիրյան 23	4000	2018թ-ի դեկտեմբերի 15-ը՝
3	33141142/1	Ներարկիչներ	Չինաստան, Ռեկոֆարմա ՍՊԸ-ի համար	Ներարկիչ միանգամյա օգտագործման համար 3.0 խորանարդսանտիմետր 23G ասեղով Ներարկիչը պատրաստված է թափանցիկ, ոչ տոքսիկ նյութից: Հանձնման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթություն):Ֆիրմայի նշանով :	հատ	11,80	11800	1000	Ք. Երևան, Ամիրյան 23	1000	2018թ-ի դեկտեմբերի 15-ը՝
4	33141142/2	Ներարկիչներ	Չինաստան, Ռեկոֆարմա ՍՊԸ-ի համար	Ներարկիչ միանգամյա օգտագործման համար 5.0 խորանարդսանտիմետր 21G,22G, 23G ասեղով Ներարկիչը պատրաստված է թափանցիկ, ոչ տոքսիկ նյութից: Հանձնման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթություն):Ֆիրմայի նշանով	հատ	11,50	13800	1200	Ք. Երևան, Ամիրյան 23	1200	2018թ-ի դեկտեմբերի 15-ը՝
5	33141142/3	Ներարկիչներ	Չինաստան, Ռեկոֆարմա ՍՊԸ-ի համար	Ներարկիչ միանգամյա օգտագործման համար 10.0 խորանարդսանտիմետր 21G ասեղով Ներարկիչը պատրաստված է թափանցիկ, ոչ տոքսիկ նյութից: Հանձնման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթություն):Ֆիրմայի նշանով	հատ	16,78	13424	800	Ք. Երևան, Ամիրյան 23	800	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝
6	33141142/4	Ներարկիչներ	Չինաստան, Ռեկոֆարմա ՍՊԸ-ի համար	Ներարկիչ միանգամյա օգտագործման համար 20.0 խորանարդսանտիմետր 21G ասեղով Ներարկիչը պատրաստված է թափանցիկ, ոչ տոքսիկ նյութից: Հանձնման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթություն):Ֆիրմայի նշանով	հատ	26,00	18200	700	Ք. Երևան, Ամիրյան 23	700	2018թ-ի դեկտեմբերի 15-ը՝
7	33141111/1	Կպչուն սպեղանիներ	Հայաստան, Ռեկոֆարմա	[illegible] 2,5x5 կտորի Հանձնման պահին պիտանելիության ժամկետի	հատ	123,00	6150	50	Ք. Երևան, Ամիրյան	50	2018թ-ի հունիսի 30-ը՝

				առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմայի նշումով					23		
9	33121180/1	Արյան ճնշման չափման սարք (տոնոմետր)	Չինաստան	Տոնոմետր ֆոնենեոսկոպով մեխանիկական: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով: Գրանցված սպառանքանիշի հավաստագրի առկայություն:	հատ	2699,99	67499,75	25	Ք. Երևան, Ամիրյան 23	25	2018թ-ի դեկտեմբերի 15-ը՝
10	33141129/1	Դիմակ	Չինաստան, Լեյկոպլեքս ՍՊԸ-ի համար	Բժշկական դիմակներ ռեզինե կապերով, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմային նշումով	հատ	9,80	4900	500	Ք. Երևան, Ամիրյան 23	500	2018թ-ի հունիսի 30-ը՝
35	33161220/1	Շպատել փայտե	Հայաստան, Լեյկոպլեքս	Շպատել փայտե ոչ ստերիլ Ֆորմատ: հատ Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմայի նշումով	հատ	4,29	4290	1000	Ք. Երևան, Ամիրյան 23	1000	2018թ-ի հունիսի 30-ը՝
36	33141159/1	Ձեռնոցներ բժշկական ոչ ստերիլ	Չինաստան, Լեյկոպլեքս ՍՊԸ-ի համար	N50 կամ այլ քանակի փաթեթավորումով տուփ, լատեքսից,տալկով,չափահանված S,M,L չափերի Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմայի նշումով Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»	զույգ	26,00	61100	2350	Ք. Երևան, Ամիրյան 23	2350	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝
37	33141158/1	Վիրաբուժական ձեռնոցներ	Չինաստան, Լեյկոպլեքս ՍՊԸ-ի համար	N50 կամ այլ քանակի փաթեթավորումով տուփ, լատեքսից,տալկով,պիտահանված N6,5; N7; N7,5; N8 չափերի : Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմայի նշումով: Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»	զույգ	79,00	47400	600	Ք. Երևան, Ամիրյան 23	600	2018թ-ի դեկտեմբերի 15-ը՝
44	33141211/2	Բժշկական այլ գործիքներ և պարագաներ	Հայաստան, Լեյկոպլեքս	Հիգիենիկ սանման ոչ գործվածքային նյութից /ֆլիզելին/ 60սմ x40սմ չափի: Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»	հատ	50,00	50000	1000	Ք. Երևան, Ամիրյան 23	1000	2018թ-ի դեկտեմբերի 15-ը՝
50	33141178/1	Դեղերի ներարկման համակարգեր	Չինաստան, Լեյկոպլեքս ՍՊԸ-ի համար	Ներարկման համակարգ ֆիկսորով: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»	հատ	42,00	2100	50	Ք. Երևան, Ամիրյան 23	50	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝
51	33631140/1	Սալիցիլաթթու d01ae12, s01bc08	Չինաստան, Արշին	Սպիտակ մանր ասեղնաձև բյուրեղներ կամ թեթև բյուրեղական փոշի առանց հոտի: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»	կիլոգրամ	4500,00	1350	0.3	Ք. Երևան, Ամիրյան 23	0.3	2018թ-ի հունիսի 30-ը՝
52	33141110/1	Վիրակապեր	Հայաստան, Լեյկոպլեքս	ԱՎԳԻ /ԱՆՀԱՏԱԿԱՆ ՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ՓԱՅԵՏԻ/մանրէազերծ մեկ հատ 7մ*10սմ բինտ ստերիլ, մանրէազերծ բարձիկ 10սմ*10սմ 2 հատ , փաթեթավորումը՝անջրաթափանց ձգվող պոլիէթիլենային թաղանթ: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմայի նշումով Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»	հատ	270,00	135000	500	Ք. Երևան, Ամիրյան 23	500	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝
53	33141110/2	Վիրակապեր	Հայաստան, Լեյկոպլեքս	Վիրակապ բժշկական 7*14 մանրէազերծ խտությունը +/- 36, քաշը՝34 ից 35 գր: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես	հատ	134,00	134000	1000	Ք. Երևան, Ամիրյան 23	1000	2018թ-ի դեկտեմբերի 15-ը՝

				ծանոթությունը): Ֆիրմայի նշումով Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»							
54	33141110/3	Վիրակապեր	Հայաստան, Լեյկոալեքս	Վիրակապ բժշկական 7*14 ոչ մանէազերծ խտությունը +/- 36, քաշը՝34 ից 35 գր: Ֆիրմայի նշումով Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»	հատ	119,00	119000	1000	Ք. Երևան, Ամիրյան 23	1000	2018թ-ի դեկտեմբերի 15-ը՝
75	33411370/1	Լատեքս գլոուվ փաուդֆրի	Չինաստան, Լեյկոալեքս ՍՊԸ-ի համար	Լատեքս գլոուվ փաուդֆրի կամ համարժեքը Միանգամյա օգտագործման,ոչ մանրէազերծ, S,M չափերի լատեքսից ձեռնոց: N50 կամ այլ քանակի փաթեթավորումով տուփ Հանձնման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմայի նշումով:	զույգ	32,00	72000	2250	Ք. Երևան, Ամիրյան 23	2250	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝

Ծանոթություն

* Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս:

Ապրանքի տեղափոխումը ավտոտրանսպորտով, բեռնաթափումը՝ բանվորական ուժով կատարվում է մատակարարի կողմից: Ապրանքը մատակարարվում է ք. Երևան, Ամիրյան 23 հասցեով:

Տեխնիկական բնութագրերով բոլոր հղումների դեպքում Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի, 5-րդ մասի համաձայն հասկանալ կամ համարժեքը:

**մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301075
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

ՎԱՃԱՌՈՂ

«ԼեյկոԱլեքս» ՍՊԸ
ք. Երևան, Ֆուչիկի 27/14
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Հ/հ 205002223860
ՀՎՀՀ 04414816

Տնօրեն

Գ. Ալեքսանյան

ԱՂՅՈՒՍԱԿ N 1

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Ապրանքի		Նախատեսվում է գնել 2018թ.			Ընդամենը
	Անվանումը	Չափման միավորը	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	քանակը
			քանակը	քանակը	քանակը	
1	2	3	4	5	6	7
1	Բժշկական բամբակ	կգ	10	10	20	40
2	Անծեռոցիկներ	հատ	1500	1000	1500	4000
3	Ներարկիչներ	հատ	500	0	500	1000
4	Ներարկիչներ	հատ	600	0	600	1200
5	Ներարկիչներ	հատ	400	400	0	800
6	Ներարկիչներ	հատ	400	0	300	700
7	Կպչուն սպեղանիներ	հատ	50	0	0	50
9	Արյան ճնշման չափման սարք (տոնոմետր)	հատ	15	0	10	25
10	Դիմակ	հատ	500	0	0	500
35	Շպատել փայտե	հատ	1000	0	0	1000
36	Ձեռնոցներ բժշկական ոչ ստերիլ	զույգ	1250	1100	0	2350
37	Վիրաբուժական ձեռնոցներ	զույգ	300	0	300	600
44	Բժշկական այլ գործիքներ և պարագաներ	հատ	500	0	500	1000
50	Դեղերի ներարկման համակարգեր	հատ	0	50	0	50
51	Սալիցիլաթթու d01ae12, s01bc08	կգ	0.3	0	0	0.3
52	Վիրակապեր	հատ	250	250	0	500
53	Վիրակապեր	հատ	500	0	500	1000
54	Վիրակապեր	հատ	500	0	500	1000
75	Լատեքս գլոուվ փաուդֆրի	զույգ	1000	1250	0	2250

Հավելված N 2

11/163-2018 «27» 04 2018թ. կնքված ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՍ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**									
			Հունվար %	Փետրվար %	Մարտ %	Ապրիլ %	Մայիս %	Հունիս %	Հուլիս %	Օգոստոս %	Սեպտեմբեր %	Ընդամենը %
1	33141115/1	Բժշկական բամբակ	16990,0	16990,0	16990,0	33980	33980	33980	33980	33980	67960	67960
2	33141118/1	Անձեռոցիկներ	11985,0	11985,0	11985,0	19975	19975	19975	19975	19975	31960	31960
3	33141142/1	Ներարկիչներ	5900,0	5900,0	5900,0	5900	5900	5900	5900	5900	11800	11800
4	33141142/2	Ներարկիչներ	6900,0	6900,0	6900,0	6900	6900	6900	6900	6900	13800	13800
5	33141142/3	Ներարկիչներ	6712,0	6712,0	6712,0	6712,0	6712,0	6712,0	13424	13424	13424	13424
6	33141142/4	Ներարկիչներ	10400,0	10400,0	10400,0	10400,0	10400,0	10400,0	10400,0	10400,0	18200	18200
7	33141111/1	Կպչուն սպեղանիներ	0	0	6150	6150	6150	6150	6150	6150	6150	6150
9	33121180/1	Արյան ճնշման չափման սարք (տոնոմետր)	40499,85	40499,85	40499,85	40499,85	40499,85	40499,85	40499,85	40499,85	67499,75	67499,75
10	33141129/1	Դիմակ	0	0	4900	4900	4900	4900	4900	4900	4900	4900
35	33161220/1	Շպատել փայտե	0	0	4290	4290	4290	4290	4290	4290	4290	4290
36	33141159/1	Ձեռնոցներ բժշկական ոչ ստերիլ	32500,0	32500,0	32500,0	32500,0	32500,0	32500,0	61100	61100	61100	61100
37	33141158/1	Վիրաբուժական ձեռնոցներ	23700,0	23700,0	23700,0	23700,0	23700,0	23700,0	23700,0	23700,0	47400	47400
44	33141211/2	Բժշկական այլ գործիքներ և պարագաներ	25000,0	25000,0	25000,0	25000,0	25000,0	25000,0	25000,0	25000,0	50000	50000
50	33141178/1	Դեղերի ներարկման համակարգեր	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	2100	2100	2100	2100
51	33631140/1	Սալիցիլաթթու d01ae12, s01bc08	0,0	0,0	1350	1350	1350	1350	1350	1350	1350	1350

52	33141110/1	Վիրակապեր	67500,0	67500,0	67500,0	67500,0	67500,0	135000	135000	135000	135000	135000
53	33141110/2	Վիրակապեր	67000,0	67000,0	67000,0	67000,0	67000,0	67000,0	67000,0	67000,0	134000	134000
54	33141110/3	Վիրակապեր	59500,0	59500,0	59500,0	59500,0	59500,0	59500,0	59500,0	59500,0	119000	119000
75	33411370/1	Լատեքս գլոուվ փաուդֆրի	32000,0	32000,0	32000,0	32000,0	32000,0	72000	72000	72000	72000	72000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափը:*

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301075
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

ՎԱՃԱՌՈՂ

«ԼեյկոԱլեքս» ՍՊԸ
ք. Երևան, Ֆուչիկի 27/14
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Հ/հ 205002223860
ՀՎՀՀ 04414816

Տնօրեն

Գ. Ալեքսանյան

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N _ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն